«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 50/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ • 11.09.2019թ. ժամը 16:10

Համաձայն ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից 21.08.2019թ-ն թիվ 14/14.8/38761-2019 գրությամբ ՀՀ Արդարադատության Նախարարություն հասցեյագրված և 30.08.2019թ-ին 286/19761-19 գրությամբ վերահասցեյագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 03.09.2019թ-ին ստացված, քաղաքացի Սիրանուշ Իգիթյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Դավիթ Աղամյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ **ս/թ-ի Սեպտեմբերի 11-ին,16-00-ին** ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը: «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝քաղաքացի Սիրանուշ Իգիթյանը
Քաղաքացի Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝Դավիթ Աղամյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտրիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Դիմումատու՝քաղաքացի Սիրանուշ Իգիթյանը
Քաղաքացի Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝Դավիթ Աղամյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից 21.08.2019թ-ն թիվ 14/14.8/38761-2019 գրությամբ ՀՀ Արդարադատության Նախարարություն հասցեյագրված և 30.08.2019թ-ին 286/19761-19 գրությամբ վերահասցեյագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 03.09.2019թ-ին ստացված, քաղաքացի Սիրանուշ Իգիթյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Դավիթ Աղամյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ստուգեց մասնակիցների ինքնությունը: Համաձայն կարգի դիմում բողոքը հակիրճ ներկայացնելու համար ձայն տվեց ներկա դիմումատու Սիրանուշ Իգիթյանին,ով ներկայացրեց նիստի մասնակիցների դիմում բողոքի էությունը և գործի վերաբերյալ իր

փաստաթղթերը:Մասնավորապես դիմումատուն նշեց որ ինքը հանդիսանալով պարտատեր գտել և կառավարչին է ներկայացրել պարտապանի համասեփականության իրավունքով գույքը,որը կառավարչի միջոցով իրացվել է և ամբողջ գումարը իրեն չի տրամադրվել այլ բաշխման ծրագրով նախատեսվել է բավականին մեծ ծախսեր այդ թվում կառավարչի օգնականին և բացի դրանից ստացված գումարը •կառավարիչը բաժանել է իր և մյուս պարտատիրոջ միջև որը իր կարծիքով կառավարչի կողմից սխալ է կատարվել:Նշվածի մասով ինքը առարկություններ է ներկայացրել դատարան և դատարանը մերժել է բաշխման ծրագիրը դեռ 30.04.2019թ-ին:Իր կողմից բացմիցս տեղեկացվել է կառավարչին նոր բաշխման ծրագրի կազմման մասին իսկ կառավարիչը այդ ծրագիրը չի կազմում,որը իրեն վնասներ է պատճառում,այդ իսկ պատճառով էլ դիմել է ՀՀ Վարչապետին որպեսզի կատարվի ճիշտ բաշխում և ինքը ստանա ամբողջ գումարը:

Դիմումատուն հանձնաժողովին ներկայացրեց ՀՀ Սնանկության դատարանի 30.04.2019թ-ի ՇԴ1/0088/04/17 որոշման լուսապատճենը ըստ որի դատարանը մերժել է բաշխման ծրագիրը:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղեցին դիմումատուին և ստացան պատասխաններ:

Հանձնաժողովի նախագահն կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝քաղաքացի Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Դավիթ Ադամյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին,որ սույն ՇԴ1/0088/04/17 սնանկության գործը վարույթ է վերցվել 22.12.2017թ-ին,նույն դատարանի 22.12.2017թ-ի վճռով պարտապանը ճանաչվել է սնանկ,ինքը սնանկության գործով կառավարիչ է նշանակվել դատարանի 08.01.2018թ-ի որոշմամբ:

Պարտապանի հանդեպ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատվել է 06.04.2018թ-ին,ըստ որի գրանցվել են պարտատեր Ս.Իգիթյանի 3200 ԱՄՆ դոլարի պահանջը և «Արդշինբանկ»ՓԲԸ-ի պահանջը,որպես չապահովված /Է/ վճարման հերթի պահանջ:

Պահանջների բավարարման նպատակով կատարված պարտապանի գույքի որոնողական աշխատանքների ընթացքում,այդ թվում նաև պարտատիրոջ տրված տեղեկատվության հիմքով,հայտնաբերվել,գույքագրվել,գնահատվել և իրացվել է պարտապանի անշարժ գույքի բաժնեմասը,իսկ առաջացած դրամական միջոցների բաշխման համար կազմվել էր ծրագիր և ներկայացվել է դատարանին և պարտատերերին:Պարտատեր Ս.Իգիթյանը ներկայացրել է առարկություն համարյա նույնաբովանդակ սույն դիմումի հետ,որը քննվել է դատական նիստում և մասնակի բավարարվել է դատարանի կողմից 30.04.2019թ-ին ընդհանուր մերժելով բաշխման ծրագրի հաստատումը:Կառավարիչը նշեց,որ նույն որոշմամբ դատարանը անդրադարձել է մյուս պարտատիրոջը համամասնորեն հատկացված պահանջի բավարարման բողոքին և հաստատել է կառավարչի այդ հոդվածով բաշխումը,որպես ճիշտ,բացատրելով թե որ օրենքի հիման վրա է կատարվել համամասնությունը,իսկ պարտատերը այժմ նույնպես պնդում է որ ամբողջ գումարը իրեն պետք է հատկացնեն,հաշվի չառնելով դատարանի որոշումը:

Կառավարիչը ներկայացրեց,որ իր կողմից հաշվի առնելով դատարանի կարծիքը կազմվել է նոր բաշխման ծրագիր և ծանուցելով այդ մասին պարտատերերին այդ թվում նաև բողոքաբերի,որը նոր բաշխման ծրագիրը ստացել է հուլիս ամսին,12.07.2019թ-ին ներկայացրել է դատարանին:Դատարանի կողմից 04.09.2019թ-ին հաստատվել է առ այն որ ծրագիրը չի բողոքարկվել,որպիսի հիմքով էլ կատարվել է բաշխումները,այդ թվում նաև Ս.Իգիթյանին՝ համամասնորեն 06.09.2019թ-ին՝577 670 ՀՀ դրամի չափով:

Կառավարիչը ներկայացրեց համապատասխան ապացույցներ և նշեց որ իր կողմից պարտատիրոջ հետ միշտ հարաբերություններում պահվել է կոռեկտություն և իր գործառույթները իրականացվել են օրենքներով սահմանված ընթացակարգերով և առանց կարգապահական խախտումների,իսկ դիմումատուի կողմից ներկայացված դիմումը նա որպես առարկություն ներկայացրել է նաև դատարան,որի վերաբերյալ առկա է համապատասխան որոշում:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին առ այն,որ կառավրչի և պարտատիրոջ միջև եղել են արդյոք անձնական հանդիպումներ մինչև քննարկվող դեպքերը և

կառավարիչը տրամադրել է արդյուք վարույթից նյութեր պարտատիրոջը այդ թվում նաև կատարված ծախսերի վերաբերյալ:

Դ.Աղամյանը պատասխանեց,որ իր կողմից հայտնվել է պատրաստակամություն մանրամասը քննարկել ծրագիրը և կատարված ծախսերը,բայց պարտաիրոջ միակ ցանկությունը ամբողջ գումարի իրեն հատկացումն է եղել,առանց ծախսերի կամ այլ պարտատիրոջը հատկացումների,դրա պատճառով էլ քննարկումներ տեղի չեն ունեցել:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարչի կողմից կատարվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ,56-րդ,76-րդ,80-րդ և 82-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերը և նրա գործողությունները միտված են պահանջների բավարարման համար անհրաժեշտ միջոցների կիրառմանը,իսկ պարտատեր հանդիսացող բողոքաբերի կողմից ամեն կերպ փորձեր է կատարվում,այդ թվում նաև դիմում-բողոքների ձևով ուղղորդել կառավարչի գործողությունները և ստանալ օրենով իրեն չհասնող գումարային բավարարումներ:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց անդամներին գնահատել ներկայացված փաստական հանգամանքները,որի շրջանակներում հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմում նշված փաստական հանգամանքները հիմնականում վերաբերվում են մի բանի որ կառավարիչը կիրառել է համամասնություն,որը դիմումատուի կարծիքով սխալ է կիրառվել և չպիտի կիրառվեր,քանի որ այդ գույքի տեղը ինքն է հուշել կառավարչին և բանկը դրա մասին տեղեկություն չունի,ինչ վերաբերվում է ՍԳ կառավարչի գործողություններին, ապա դիմումատուն իր դիմումով խնդրում է վարչապետի միջամտությունը կառավարչի կողմից նոր բաշխման ծրագրի կազմման համար,որը իսկապես կարելի է համարել ուշացված,քանի որ մերժվելով դատարանի կողմից 30.04.2019թ-ի,նոր բաշխման ծրագիրը ներկայացվել է շուրջ 2.5 ամիս հետո,որը պահանջատիրոջ կողմից դիտվել է որպես դիտավորություն:

Հանձնաժողովի անդամը հայտնեց.որ իր կարծիքով կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում և առաջարկեց կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը նշեց,որ ուսումնասիրելով դիմումը և ներկայացված փաստաթղթերը ակնհայտ է,որ պարատեր հանդիսացող դիմումատուն ձգտում է ամեն կերպ ստանալ պարտապաններից իր պահանջների բավարարումը և ինչքան հնարավոր է շուտ ու շատ:Այդ նպատակին հասնելու համար ,իր կարծիքով խանգարող կամ վատ /արագ ու իր բոլոր ցանկությունները/ չկատարող,հանգամանքներին այդ թվում կառավարչի գործողություններին վերբերվում է վերապահումով և գնահատում է իր տեսակետից և իր շահերից:

Բացի դրանից կառավարչի կողմից մերժված ծրագրի փոխարեն նոր ուղղված ծրագիր ներկայացնելը տևել է շուրջ 2.5 ամիս,որը ճիշտ է օրենքով սահմանված ժամկետ չունի,բայց կարելի է այդ ժամկետը ընդունել ողջամիտ ժամկետը,քանի որ տվյալ դեպքում կառավարչի կողմից արդեն հաշվարկները կատարված էին և ընդհամանը պետք է հաշվի առնվեր դատարանի որոշմամաբ նշված թերությունները,որոնք այդքն էլ երկար ժամանակ չէին պահանջում:

Հաշվի առնելով դատարանի որոշումը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և դիմումում շարադրված փաստերը հանձնաժողովի նախագահն մասնակի համաձայնելով արտահայտած կարծիքների հետ նշեց որ համաձայն «Սնանկության գործով կառավարչի Վարքագծի կանոնագրքի» 1.8.կետի ՍԳ կառավարիչը պարտավոր է իր գործառույթները իրականացնել բարեխոնրեն և արդյունավետ և 1.10. ողջամիտ ժամկետում սնանկության վարույթը ավարտելու համար:

Այս պարագայում սնանկության գործով կառավարիչ՝Դավիթ Աղամյանը իր կարծիքով իր գործառույթները կատարել է բարեխոնրեն բայց ողջամիտ ժամկետում չիրականացնելով դատարանի որոշումը արդյունավետ չի իրականցրել իր գործառույթը,առաջարկեց «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1.կետի 5-րդ մասի հիմքով հայտարարել նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ

իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունները,ապահովվելով վարույթի մասնակիցների շահերի պաշպանությունը և իր գործառույթների իրականացման օրենքով սահմանված կամ ողջամիտ ժամկետները:
Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից 21.08.2019թ-ն թիվ 14/14.8/38761-2019 գրությամբ ՀՀ Արդարադատության Նախարարություն հասցեյագրված և 30.08.2019թ-ին 286/19761-19 գրությամբ վերահասցեյագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 03.09.2019թ-ին ստացված, քաղաքացի Սիրանուշ Իգիթյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Դավիթ Ադամյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով Աիդա Գառնիկի Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Դավիթ Ադամյանին հայտարարել նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունները,ապահովվելով վարույթի մասնակիցների շահերի պաշպանությունը և իր գործառույթների իրականացման օրենքով սահմանված կամ ողջամիտ ժամկետները:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան